ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» փետրվարի 2013թ. **N----- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ.580-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի «Երևան քաղաքում ավտոճանապարհ կառուցելու ներդրումային ծրագրի մասին» հ.1800-Ա որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Պետրոս Փալանջյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 15.04.2008թ. հ.2486193 վկայական) տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող Երևանի Գոգոլի փողոցի հ.88/1 հասցեում գտնվող 393.52 քմ մակերեսով հողամասից 36.26քմ մակերեսով հողամասը հարակից տարածքում գտնվող Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող 36.26քմ մակերեսով համարժեք հողամասի հետ փոխանակելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն որոշման նախագծով նախատեսվում է Պետրոս Փալանջյանին Գոգոլի փողոցի հ.88/1 հասցեում սեփականության իրավունքով պատկանող 393.52քմ մակերեսով հողամասի 36.26քմ մակերեսով հողամասը փոխանակել հարակից տարածքում գտնվող Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող 36.26քմ մակերեսով հողամասի հետ:

Հողամասերի փոխանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Պ.Փալանջյանին Գոգոլի փողոցի հ.88/1 հասցեում սեփականության իրավունքով պատկանող 393.52քմ մակերեսով հողամասից 36.26քմ մակերեսով հատվածն ընդգրկված է կառուցվող ավտոճանապարհի համար նախատեսված հողամասի սահմաններում:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը և նախատեսվող ավտոճանապարհի վերակառուցման անհրաժեշտությունը, ինչպես նաև վերակառուցման արդյունքում դրա դերն ու նշանակությունն, ավտոճանապարհի գերծանրաբեռնվածության թեթևացման հարցում հողամասի սեփականատիրոջ հետ տեղի ունեցած բազմաթիվ բանակցությունների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, որպես նշված հողամասի փոխանակում առաջարկվում է Գոգոլի փողոցի հ.88/1 հասցեում գտնվող Պետրոս Փալանջյանին սեփականության իրավունքով պատկանող 393.52 քմ մակերեսով հողամասից 36.26քմ. մակերեսով հողամասը փոխանակել Երևան համայնքի սեփականություն հանդիսացող համարժեք հողամասի հետ:

Քննարկվող հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1), 2), 3) ենթակետերի պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում են 6-րդ գոտում:

«Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի «Երևան քաղաքում ավտոճանապարհ կառուցելու ներդրումային ծրագրի մասին» հ.1800-Ա որոշման կատարումն ապահովելու հանգամանքով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ